

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ողորմությամբն Աստուծո Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը Միածնաէջ Մայր տաճարիս մեջ, համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, 14 փետրվար 1982 թվի կիրակի օրը, սրբազան մյուռոնի օծմամբ եպիսկոպոս ձեռնադրեց Մայր Աթոռիս միաբան հինգ վարդապետների:

Ձեռնադրվողներն են՝

1. Տ. Եղիշե եպիսկոպոս Կիզիրյան՝ Մեծն Բրիտանիո հայոց վիճակի վրա.

2. Տ. Ոսկան եպիսկոպոս Գալբակյան՝ Հունաստանի հայոց թեմի վրա.

3. Տ. Աղան եպիսկոպոս Բալիոզյան՝ Ավստրալիո և Հեռավոր Արևելքի թեմի վրա.

4. Տ. Նորվան եպիսկոպոս Ջաքարյան՝ Լիոնի և շրջակայքի եկեղեցյաց վրա, իբրև փոխանորդ հայրապետական պատվիրակի Արևմտյան Եվրոպայի.

5. Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյան՝ Իրաքի հայոց թեմի վրա:

Ձեռնադրությունը կատարվեց խարտավիլակությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանի, Վեհափառ Հայրապետի կողքին ընթերակա եպիսկոպոսները լինելով Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան և Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյան:

Սրբազան արարողությունները տեղի ունեցան պատշաճ հանդիսավորությամբ ի ներկայության համապատասխան թեմերից ուխտավորաբար եկած թեմական իշխանությանց ներկայացուցիչների, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, ներքին թեմերի պատգամավորությունների և խուռներամ հավատացյալների:

Հինգշաբթի օրը, փետրվարի 18-ին, Վարդանանց հերոսամարտի տոնին, նորապսակ եպիսկոպոսները մատուցեցին իրենց ուխտի պատարագները Էջմիածնի Մայր տաճարում և Երևանի եկեղեցիներում և հաջորդող օրերին մեկնեցին դեպի իրենց թեմերը, տանելով իրենց վստահված ժողովրդին Վեհափառ Հայրապետի հայրական սիրո ողջույններն ու օրհնությունները:

Թող Տերը ընդունելի անի նորապսակ սրբազան հայրերի ուխտն ու ընծայումը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
20 փետրվար 1982 թ.